



«ԲՆԱԿԱՐԱՆ ԱԿՏԻՎ» ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱԿԻՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ապահովագրական դեպք են համարվում հետևյալ իրադարձությունները.

- Բնակարանի ներքին հարդարանքի և/կամ ինժեներական սարքավորումների ոչնչացումը կամ վնասումը հրդեհի, պայթյունի, կայծակահարման, տրանսպորտային միջոցների վրաերթի և/կամ կենդանու հետ բախման, թռչող սարքերի, դրանց մասերի, բեռի վայր ընկնելու, սեփականության նկատմամբ հանցագործության (կոտորանքով գողություն, ավազակություն, այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացում/վնասում), հարևան տարածքներից վթարի արդյունքում ջրի և այլ հեղուկների ներթափանցման հետևանքով,
- Երրորդ անձանց (հարևանների) գույքին, և/կամ կյանքին և/կամ առողջությանը պատճառված վնասները՝ հրդեհի, պայթյունի, ջրի արտահոսքի արդյունքում և այլ ոխկերի ի հայտ գալու դեպքում:

Ապահովագրության չեն ընդունվում (ներառում է, սակայն չի սահմանափակում)

- Բնակարանները՝ տեղակայված բազմաբնակարանային տներում, որոնցում իրականացվում է կապիտալ վերանորոգում կամ որոնք ունեն կապիտալ վերանորոգման կարիք,
- Բնակարանները՝ տեղակայված բազմաբնակարանային տներում, որոնք ներառված են տարաբնակեցման պլաններում մոտակա 12 ամիսների ընթացքում,
- Խարիսույ շինությունները, որոնց ֆիզիկական մաշվածությունը կազմում է 75 և ավելի տոկոս,
- 150 քառ.մ գերազանցող մակերես ունեցող բնակարանները,
- Վթարային վիճակում գտնվող կամ քանդման ենթակա շենքերում գտնվող բնակարանները,
- Փայտից տները եւ շինությունները, ինքնակամ կառույցները:

Ապահովագրական պատահարից բացառություններ (ներառում է, սակայն չի սահմանափակում)

- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցություն,
- Ռազմական գործողություններ, պորաշարժեր կամ այլ ռազմական միջոցառումներ,
- Աղտոտվածության կամ կոռոզիայի ազդեցություն,
- Բնական մաշվածություն,
- Ջերմային վերամշակման ընթացքում գույքին պատճառված վնասը
- Պայթուցիկ նյութերի պատճառված վնասումը, որոնք օգտագործվել են ապահովագրության օբյեկտի հասցեում
- Ապահովագրության օբյեկտի կրակով մշակում կամ այլ ջերմային եղանակով դրա վրա ազդեցություն (օրինակ՝ չորացում, եփում, արդուկում, ապխտում, տապակում, տաք մշակում, ոչ հրդեհի հետևանքով առաջացած այրում և այլն),
- Ապահովագրված անձի /Նրա ընտանիքի անդամների/մերձավոր ազգականների կողմից կամ մասնակցությամբ դիտավորությամբ պատճառված վնասը և այլն:

Ապահովագրողն ապատվում է քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական հատուցում իրականացնելու իր պարտավորությունից, եթե

- Ապահովագրական պատահարը հանդիսացել է Ապահովագրի (Ապահովագրված անձի) /Նրա ընտանիքի անդամների /մերձավոր ազգականների դիտավորյալ գործողությունների հետևանք,
- Ապահովագրի (Ապահովագրված անձի) անհրաժեշտ ինքնապաշտպանության արդյունքում վնաս է պատճառել այլ անձի (Շահառուի), որն անմիջական ոտնձգություն է իրականացրել Ապահովագրի (Ապահովագրված անձի)՝ օրենքով պաշտպանված իրավունքների և շահերի նկատմամբ:

Այլ պայմաններ՝

- Ապահովագրությունն իրականացվում է առանց գույքի վնասման:
- Առաջին դիսկի հատուցման պայմանով (հատուցումը հաշվարկվում է վնասի չափով՝ ապահովագրական գումարի սահմաններում՝ առանց վնասի չափի նկատմամբ ապահովագրական գումարի և գույքի շուկայական արժեքի հարաբերության համամասնություն կիրառելու):
- Հատուցումն իրականացվում է՝ հաշվի առնելով մաշվածությունը (ապահովագրության օբյեկտի վնասման դեպքում իրական վնասի չափը հավասար է դրա վերանորոգման (վերականգնման) համար կատարված ծախսերի արժեքին՝ հաշվի առնելով մաշվածությունն ու արժեքի կորուցումը, որպեսզի ապահովագրության օբյեկտի արժեքը վերականգնվի այն չափով, որը համապատասխանում է անմիջապես մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը դրա ունեցած արժեքին):
- Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ չի կիրառվում:



Ինչ պետք է անել Ապահովագրական պատահարի դեպքում

- Անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում (սակայն ոչ ուշ քան 48 ժամվա ընթացքում) հայտնել Ապահովագրական ընկերությանը ապահովագրական պատահարի առաջացման մասին՝ վանգահարելով (012) 88 88 88 շուրջօրյա հեռախոսահամարով:
- Կախված դեպքից՝ հայտնել համապատասխան մարմիններին (Ոստիկանություն (կոտրանքով գողության, ավազակության, այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացման (վնասման) դեպքում), Հրշեջ ծառայություն (հրդեհի, պայթյունի, կայծակի դեպքում), համատիրություն (ջրից վնասման դեպքում), Արտակարգ իրավիճակներ (տարերային աղետների դեպքում) և այլն),
- Հետևել ապահովագրողի ցուցումներին՝ ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ապահովագրության օբյեկտի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար, և ապահովագրության Օբյեկտը պահպանել անփոփոխ վիճակում՝ Ապահովագրողի կողմից վնասներն անցկացնելու նպատակով:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապահովագրության պայմանագրի/վկայագրի պարտադիր պայմանները/վավերապայմանները, ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցման կարգը և այլ մանրամասները, ինչպես նաև վեճերի լուծման կարգը կարգավորվում են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի 02.05.2018թ.-ի Խորհրդի նիստի թիվ 04 արձանագրությամբ հաստատված ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ՝ ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ, ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ (ՏՆՕՐԻՆՈՂՆԵՐԻ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ (Կողմ TC750-02-01, խմբ.4.), որոնց մասնամասներին կարող եք ծանոթանալ՝ այցելելով Ապահովագրական ընկերության www.rgs.am պաշտոնական կայքը: